Քննարկվել և հաստատվել է
Խորհրդի 20 02 2024թ. 02 նիստում
Խորհրդի նախագահ՝ Ա. Եսայան

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 2023 թվականի գործունեության վերաբերյալ

2023թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է առկա ձևով, 1 հերթափոխով, շաբաթական 36 դասաժամով:
Ուսումնարանում սահմանված է 5-օրյա աշխատանքային շաբաթ:
2023-2024 ուսումնական տարում ուսումնարան են ընդունվել 75 ուսանող:
2023թ. ընթացքում ուսումնարանում ուսուցանվել են «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար», «Խոհարարական գործ՝ խոհարար», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ», «Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ» մասնագիտությունները:
«Խոհարարական գործ», «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», Կահույքի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունները ներդրված են փորձարարական կարգով:
Դասախոսներն ու վարպետները դասաժամերն անցկացրել են լիարժեք պատրաստված՝ օգտագործելով տարբեր հեռավար հարթակներ, գործիքներ, տեսադասեր, տեսանյութեր, վիրտուալ լաբորատորիաներ և այլ միջոցներ, իսկ արտադրական ուսուցման ժամերն անցկացվել են հիմնովին վերանորոգված և վերազինված մասնագիտական արհեստանոցներում:
Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով ուսուցանվող մասնագիտությունների բոլոր մոդուլների համար մշակվել և ստեղծվել են ուսումնառության և դասավանդման նյութեր: Ուսումնական գործունեության ապահովման համար առկա են անհրաժեշտ տեղեկատվական նյութեր, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և ուսումնադիդակտիկ պարագաներ: Ուսումնարանի գույքը, լաբորատոր սարքավորումները, տեխնիկական միջոցները, սարք-սարքավորումները բավարար քանակությամբ են:
«Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում ներդրված է երկակի /դուալ/ ուսուցման համակարգ: 2023թ. առաջին կիսամյակում 48, իսկ երկրորդ կիսամյակում 59 ուսանող Գյումրի քաղաքի հասարակական սննդի կազմակերպությունների հետ կնքված համաձայնագրերի և պայմանագրերի հիման վրա ուսումնական պլանով նախատեսված գործնական դասաժամերը անցկացրել են համագործակցող թվով 18 մասնավոր կազմակերպությունների խոհանոցներում:

Դուալ համակարգում ընդգրկված «Խոհարարական գործ» մասնագիտությամբ սովորողներից բացի, գործատուների մոտ շաբաթական մեկ օր իրենց գործնական ուսուցման դասերն են անցկացրել «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում», Կահույքի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտական կուրսերի ուսանողները:

Արտադրական պրակտիկաներն ըստ ժամանակացույցի կազմակերպվել են համապատասխան կազմակերպություններում: Ուսանողների ցուցաբերած գիտելիքների և կարողությունների արդյունքում ուսումնարանը ստացել է շնորհակալական նամակներ գործատու կազմակերպություններից:

Տարբեր մասնագիտությունների գծով ուսումնարանի հետ համագործակցող մասնավոր կազմակերպությունների թիվը կազմում է 73, 2023թ. ակտիվ համագործակցողների թիվը՝ 43, որից 18-ը դուալ ուսուցման համակարգով:

2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում Արցախի սեպտեմբերյան դեպքերից հետո բռնի տեղահանվածներից ուսումնական հաստատությունում վերականգնվել է թվով 9 ուսանողի ուսանողական իրավունքը:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատությունում ուսանողների թիվը կազմել է 224, ավարտել են 63 /մեկ ուսանող 2020-2021 ուսումնական տարում «Խոհարարական գործ» մասնագիտության պետական որակավորման քննությանը չմասնակցած, իր դիմումի համաձայն 2022-2023 ուստարվա նշված մասնագիտության պետական որակավորման քննությանը մասնակցած, համապատասխան որակավորում ստացած/:

«Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» «Խոհարարական գործ խոհարար», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտություններով սովորող 63 շրջանավարտ ստացել է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ, որից 4-ը՝ գերազանցության:

2023թ. ընթացքում ազգային բանակ զորակոչվել են՝ 2, հեռացվել՝ 5, ծնողի դիմումի համաձայն ազատվել՝ 6 ուսանող /ընդհանուր թվով 13 ուսանող, որոնցից 4-ը մեկնել է ՌԴ, Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունում բնակվող 1 ուսանող տեղափոխվել է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան/, 1 ուսանող տեղափոխվել է այլ ուսումնական հաստատությունից, վերականգնվել է 11 ուսանողի ուսանողական իրավունքը, որից 9-ը սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանվածներ են, 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից, 1-ը ՌԴ-ից վերադարձած:

Համաձայն «ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և /կամ/ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգ»-ի՝ 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակում կրթաթոշակ է տրամադրվել 165, իսկ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակում՝ 105 ուսանողի:

Դեկտեմբերի 29-ի դրությամբ սովորողների թիվը կազմում է՝ 236:

Ուսումնարանի աշխատակիցների թիվը դեկտեմբեր 29-ին կազմում է 49 /ներառյալ հղիության և ծննդաբերության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 1 անձ/, որից 33 մանկավարժ ընդգրկված են մանկավարժական խորհրդի կազմում: Դասախոսներից 28-ը ունի բարձրագույն կրթություն /1-ը գիտության թեկնածու/, 5-ը՝ միջին մասնագիտական:

2023 թ. շրջանավարտներից 32-ը զորակոչվել է ազգային բանակ, 19-ը ընդունվել է աշխատանքի, որից ըստ մասնագիտության 6-ը՝ ոչ մասնագիտությամբ 13-ը: Նախորդ երեք տարիների շրջանավարտներից 2023թ. ընթացքում աշխատանքի են տեղավորվել ևս 34-ը:

Տարվա ընթացքում առաջացել են թափուր տեղեր՝ որոշ տեղեր ըստ կարգի համալրվել են /որպես «Խոհարարական գործ» մասնագիտության վարպետ ընդունվել է ուսումնարանի շրջանավարտ/, 2023թ.-ի ավարտին թափուր է մնացել հանրահաշիվ և երկրաչափություն առարկաների դասախոսի և «Ոսկերչություն» մասնագիտության վարպետի հաստիքները:

Հաստատությունում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիմնվելով ՄԿՈԻ օրենքի, ուսումնական հաստատության կանոնադրության, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, ուսումնական հաստատության զարգացման ծրագրի, պետական կրթական չափորոշիչների կիրառման, ուսումնական պլանով նախատեսված ուսումնական գործընթացի ժամանակացույցի, կրթության իրավունքի, կրթական ծրագրերի յուրացման ապահովման և այլ նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Համապատասխան կարգերի համաձայն հաստատությունում կազմակերպվել է ուսանողների ընդունելության, փոխադրման և շրջանավարտների ավարտման գործընթացները:

Որակավորման հանձնաժողովների հաշվետվությունները ներկայացվել է նախարարություն, եզրակացություններն ու առաջարկությունները քննարկվել են մասնագիտական մեթոդմիավորման, մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդի նիստերում:

2023 թվականին ուսանողների ընդունելությունն իրականացվել է ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ընդունելության կարգի համաձայն՝ կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով:

Ըստ ընդունող հանձնաժողովի աշխատանքային պլանի ժամանակին և պատշաճ կազմակերպվել է ընդունելության գործընթացը, արդյունքների վերաբերյալ պահանջվող հաշվետվությունը ներկայացվել է նախարարություն և քննարկվել կառավարման խորհրդի նիստում:

2023թ. ուսումնարանում, համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրի և նախահաշվի, կատարվել են նախատեսված ֆինանսական, ուսումնադաստիարակչական, ուսման որակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ:

Կրթության որակի վերահսկման նպատակով տնօրինության կողմից մասնագիտական մոդուլներից անցկացվել է կարողությունների ստուգումներ և կիսամյակային ամփոփիչ ստուգարքներ:

Կրթության որակի բարձրացման նպատակով պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ մեթոդմիավորումների, մանկավարժական և կառավարման խորհուրդների նիստերում, ինչպես նաև գործատուների հետ:

Կատարվել են կրթադաստիարակչական աշխատանքներ՝ համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձ ձևավորելու նպատակով:

2023թ.-ի ընթացքում անցկացվել են նիստեր՝ մանկավարժական խորհրդի՝ 20 նիստ՝ 9 հերթական և 11 արտահերթ, ծնողական խորհրդի՝ 4 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնադաստիարակչական և տնտեսական աշխատանքների, ուսանողների շարժի, ֆինանսական, տարաբնույթ միջոցառումների, կազմակերպչական, կարգապահական, ուսման որակի բարձրացման և ընդհանուր գործունեության վերաբերյալ հարցեր:

Ուսանողական խորհուրդը անցկացրել է 6 հերթական, 2 արտահերթ նիստ, քննարկվել է կազմակերպչական, կարգապահական հարցեր, նաև գործող «Ուսանողական ընկերություններ»-ի վերաբերյալ քննարկումներ:

Հումանիտար, բնագիտամաթեմատիկական և մասնագիտական մեթոդական միավորումները, համաձայն իրենց աշխատանքային պլանի, անցկացրել են ամենամսյա նիստեր, իրականացրել ժամաբաշխում, առարկայական դասալսումներ, դրվածքի ուսումնասիրություններ, քննարկումներ, ուսման որակի բարձրացման առաջարկներ, կատարված աշխատանքների արդյունքների վերլուծություններ և այլ աշխատանքներ:

Ուսանողական կազմից ուսումնարանի կոլեգիալ կառավարման խորհրդի նոր անդամ է ընտրվել «Խոհարարական գործ» մասնագիտության II կուրսի ուսանող Կարեն Արթուրի Հարությունյանը, քանի որ ուսումնարանի կոլեգիալ կառավարման խորհրդի անդամ «Խոհարարական գործ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Նարեկ Շահբազյանն ավարտել է ուսումնարանը:

Կառավարման և մանկավարժական խորհուրդների անդամ Ռ. Պետրոսյանի աշխատանքից ազատվելու պատճառով դասախոսական կազմից ընտրված դասախոս Վլադիմիր Բագրատունու թեկնածությունը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍՆ՝ ուսումնարանի կոլեգիալ կառավարման խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով:

Ուսումնարանում գործող ուսանողական և ծնողական խորհուրդները, համաձայն իրենց գործունեության կարգի, ակտիվ մասնակցել են հաստատության կառավարման, կազմակերպչական աշխատանքներին, կազմակերպել ժողովներ, հանդիպումներ, միջոցառումներ:

Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել ուսանողների վարքը ուղղելու, դասերին ներգրավվելու, բացակայությունների հաշվառման և կանխման ուղղությամբ, կատարվել են տնային այցեր, կազմակերպվել ծնողական ժողովներ, հանդիպումներ բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների ծնողների հետ և տարվել բացատրական աշխատանքներ: Կատարվել է ուսանողների առաջադիմության ցուցանիշների հաշվառում, հսկում: Ուսումնարանը համագործակցել է ՀՀ ոստիկանության անչափահասների և ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինների հետ՝ կրթությունից խուսափող ուսանողներին կրթական գործընթաց վերադարձնելու նպատակով:

2023 թվականին իրականացվել են սովորողների դաստիարակչական աշխատանքներ, կազմակերպվել են միջոցառումներ, համապատասխան հանձնարարականների կատարման արդյունավետության հսկում, անհրաժեշտության դեպքում նաև աջակցություն:

Ուսումնարանում ստեղծվել են նպաստավոր պայմաններ ազատ ժամանցի կազմակերպման միջոցով ապահովելու ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, վարքի շեղումների կանխարգելումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական, ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:

Ուսումնարանում բացի նախատեսված կրթադաստիարակչական միջոցառումների և բաց դասերի իրականացվել են նաև մասնակցություն «Աշխատանքի տոնավաճառների» և ցուցահանդես – վաճառքների:

2023թ.-ից սկսած ուսումնարանի ուսանողներից և շրջանավարտներից կազմվել է աշխատանքային խումբ, տրամադրվել առանձնացված տարածք, որպեսզի նրանք կարողանան սեփական գիտելիքներն ու

կարողությունները ներդնելով ստեղծեն ապրանքներ, հմտանան մասնագիտության, աշխատանքային գործունեության, ձեռնարկատիրության մեջ:
2023թ.-ի դեկտեմբերին «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «ԱՐԱՄԱՋԴ» սոցիալական տնտեսության զբաղվածության զարգացում» ծրագրի շրջանակներում սոցիալական տնտեսությունների հայտերի մրցույթին ուսումնարանը ներկայացրել է «Գաղափարից բիզնես» դրամաշնորհային հայտը:
Ուսումնական, կազմակերպադաստիարակչական աշխատանքների բարելավման նպատակով մշակվել են ներքոնշյալ կարգերը, որոնք քննարկվել և հաստատվել են են Խորհրդի կողմից.

1. «Կարիերայի ուղղորդման կենտրոնի գործունեության» կանոնակարգ
2. «Ուսանողների ստացած գնահատականների վերահանձնման» կարգ
3. «Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն և հայեցակարգ»
4. «Ուսումնարանում դասավանդման և արդյունավետության վերաբերյալ ծնողների հարցման» կանոնակարգ
5. «Որակի ապահովման» հայեցակարգ
6. «Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման» կանոնակարգ

Կատարվել են հարցումներ՝ «Ուսումնարանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների հարցման» կանոնակարգի համաձայն, վերլուծվել են արդյունքները, քննարկվել և կիրառվել են համապատասխան միջոցներ բացթողումների շտկման և գործընթացի բարելավման համար:
Կազմակերպվել են սեմինարներ՝ մանկավարժների մասնագիտական գիտելիքների որակի և համակարգչային գրագիտության բարձրացման, նոր մեթոդների ներդրման և ստեղծագործական աշխատանքի զարգացման նպատակով: Խորհրդատվական և մենթորական աշխատանքներ են տարվել սկսնակ մանկավարժների հետ: Անցկացվել են դասալսումներ, բաց դասեր, քննարկումներ, որոնք նպաստել են թերությունների շտկմանն ու վերացմանը:
Կատարվել է 2022-2023 ուսումնական տարվա գործունեության ներքին գնահատում. ձևավորվել է հանձնաժողով, որի մեջ ներգրավվել են ուսումնարանի վարչական աշխատողներ, մեթոդմիավորման նախագահներ, կառավարման խորհրդի, մանկավարժական և ուսանողական համակազմից անդամներ: Ներքին գնահատումը քննարկվել է մանկավարժական և Կոլեգիալ կառավարման խորհուրդների նիստերում:
Հաշվապահական, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, սահմանված կարգով, ժամանակին կազմվել, քննարկվել են կառավարման խորհրդում և ներկայացվել համապատասխան մարմիններին:
Հաստատության ֆինանսական գործունեությունն իրականացվել է Խորհրդի կողմից հաստատված նախահաշիվների և գնումների պլանների համաձայն:
Ուսումնարանում ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ:
Դաստիարակչական աշխատանքների շնորհիվ ազգային բանակ զորակոչված ուսանողներն աչքի են ընկել մարտական ու զինվորական կարգապահությամբ, օրինակելի ծառայությամբ:
Զինվորական ծառայության մեջ գտնվող բազմաթիվ ուսանողներ 2023 թվականի ընթացքում պաշտպանության նախարարության և զորամասերի հրամանատարության կողմից ստացել են խրախուսանքներ:

Ուսումնարանում գործում է կարերիայի կենտրոն, որի աշխատանքի արդյունքում ընդլայնվել է համագործակցող գործատու կազմակերպությունների շրջանակը:
2023 թվականի ընթացքում Կարիերայի ուղղորդման կենտրոնը իրականացրել է 48 սեմինար, 8 այցելություն:

Իրականացվել է
Իրականացվել է հաստատության զարգացման ծրագրով 2023 թվականին նախատեսված հետևյալ աշխատանքները.

- ուսանողական ընկերությունների գործունեության խթանում, ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում
- կառավարման արդյունավետության բարձրացում՝ վերահսկող նոր մեխանիզմների ներդրում
- աշխատանքի անվտանգությանն և առողջության ապահովման կրթական գործընթացի բարելավում՝ « Անվտանգության ցուցանակ»-ների պատրաստում
- մանկավարժական կազմի ուսումնամեթոդական և մասնագիտական վերապատրաստումներ
- GIZ, «Բիզնես և Կրթություն Գործընկերություն», «ՄԿՈՒ-Համագործակցություն Հարավային Կովկասում», «Հայկական Կարիտաս» ԲՀԿ հետ համագործակցության զարգացում, միջազգային կրթական ծրագրերի մասնակցություն «Էրազմուս+», «Action Against Hunger», «Դպրոցական սնունդ», ETF GLAD Network /Եվրոպական վերապատրաստումների հիմանդրամ/ կազմակերպությունների համագործակցությամբ
- հաստատության գործունեության հրապարակայնության և թափանցիկության ընդլայնում՝ «Բաց դռների օր» և նմանատիպ միջոցառումների կազմակերպում, «Աշխատանքի տոնավաճառ»-ների մասնակցություն, կայքէջերում հաստատության ֆինանսական և այլ գործունեությունների լուսաբանում: Կազմակերպվող աշխատանքներում ծնողների, ուսանողների, ՀԿ-ների և այլ կառույցների ներգրավում
- համագործակցության ընդլայնում
- ուսանողական Խորհրդի աշխատանքների ակտիվացում
- շրջանավարտների հետ կապի և աշխատանքների ապահովում
- լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում
- դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեխանիզմների և կանոնակարգերի մշակում

ՀՀ կառավարության որոշմամբ «Պետության կողմից կապիտալ դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» 23.12.2022թ. N2043-Ն/10 պայմանագրի համաձայն «Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի», «Համակարգիչների շահագործում՝ համակարգիչների օպերատոր», «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» մասնագիտությունների արհեստանոցները համալրվել են ժամանակակից անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

Վերոնշյալի շնորհիվ բարելավվել է սովորողների գործնական դասաժամերի, արտադրական ուսուցման և ուսումնական պրակտիկաների լիարժեք անցկացումը:
Շենքում առկա է հակահրդեհային, ջեռուցման և տեսանկարահանման համակարգեր:
Շենքային պայմանների բարելավման աշխատանքները կավարտվեն բուժկետի, ուսումնական զենքի սենյակի ստեղծման և շենքի արտաքին երեսապատումից հետո:
Շարունակվում է համագործակցությունը «Ընտանիք» ԲՀԿ-ի և ֆրանսիական ԻՕվոը Դողիան կազմակերպության հետ, որի շնորհիվ կազմակերպվել է 160 անապահով ուսանողների անվճար սնվելու հարցը և խոհարար մասնագիտությամբ սովորողների գործնական դասերի լիարժեք անցկացումը ուսումնական խոհանոցում:
Ուսումնարանը շարունակում է համագործակցությունը նաև «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի հետ, նպատակ ունենալով զարգացնել ուսանողական ընկերությունների գործունեությունը, միջազգային «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացնել փորձի փոխանակում ԱՀՈՒ կրթության, ուսումնարանի աշխատանքների գնահատում և միջազգայնացում:

Ըստ 22.11.2022թ.-ին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամից ստացված N Հ-11/22-263 գրության՝ ուսումնարանը ներառվել է ՄԿՈՒ հաստատության Ինստիտուցիոնալ հավատարմագրման ենթակա հաստատությունների ցանկում: Հունվարի 23-27-ը հավատարմագրման հանձնախմբի անդամները մասնակցել են հեռավար վերապատրաստմանը:
Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն է ուղարկվել ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, որն ընդունվել է կենտրոնի 22.08.2023թ. N 52 որոշմամբ:
13-16.11.2023թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման» կենտրոնի փորձագիտական խումբը այցելել է հաստատություն: Աշխատանքները կազմակերպվել են ըստ սահմանված ժամանակացույցի՝ ապահովվել է հանդիպումների մասնակիցների ներկայությունը, տրամադրվել են անհրաժեշտ փաստաթղթերը, տեղեկատվությունը, կատարվել է շրջայց ուսումնարանում, դիտարկվել է ռեսուրսները և այլն: Հունվար ամսին ըստ ժամանակացույցի սպասվում է ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբի զեկույցը:

Ուսումնարանը տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներից զատ մասնակցել է մարզային և հանրապետական միջոցառումների և գրանցել հաջողություններ.

- **14.02.2023թ.** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը մասնակցեց Ժողովրդական Ճարտարապետության և Քաղաքային Կենցաղի Թանգարանի բակում կազմակերպած Տյառնընդառաջի միջոցառմանը:
- **22.03.2023թ.** Հայկական Կարիտասը «Արևային էներգիայի կիրառումը որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց» ծրագրի շրջանակներում, մարտի 20-26 հայտարարել է «Երկրի ժամը» իրազեկման շաբաթ, որի շրջանակում՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողները մասնակցեցին բնապահպանական շարժմանը:
- **23.03.2023թ.** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, տեղի ունեցավ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝«Action Against Hunger» կազմակերպության կողմից իրականացվող

«Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված զբաղվածության ոլորտում կիրառվող նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանության չորսամսյա դասընթացների մասնակիցների վկայագրերի հանձնման արարողությունը: Ուսումնական հաստատությունն իր հարկի տակ հյուրընկալեց Action Against Hunger կազմակերպության՝ սոցիալական ներառման ծրագրերի ղեկավար Լեյլա Մահսուրաձեին, Action Against Hunger Հայաստանի գրասենյակի ղեկավար Գ.Հովհաննիսյանին, ծրագրի պատասխանատու Հ.Սիմոնյանին, GIZ -ի մոնիթորինգի և գնահատման մասնագետ՝ Ռ.Բեժանյանին, Շիրակի մարզի ՄԿՈՒ ոլորտի տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և այլոց:

18.04.2023թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Հուզական ինտելեկտ» թեմայով դասընթացը՝ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատողներ Սոնա Հակոբյանի և Արտաշես Հարությունյանի նախաձեռնությամբ:

19.04.2023թ. ուսումնարանի բակում և մասնաշենքում՝ օրինակելի նախաձեռնության շրջանակում, իրականացվեցին շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ՝ ապահովելով ուսանողների և վարպետ-դասախոսների ակտիվ մասնակցությունը:

22.05.2023թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և ՄԿՈՒ» ծրագրի շրջանակում, «Կարիերայի Լաբ»(@careerlab.arm) ՀԿ-ի համագործակցությամբ, իրականացվեց մասնագիտական կողմնորոշման դասընթաց Շիրակի մարզի դպրոցների 37 աշակերտների համար: Դասընթացի նպատակն էր նպաստել դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը՝ սեփական հետաքրքրություններին ու պահանջմունքներին համապատասխան: Դպրոցականները հնարավորություն ունեցան ուսումնական հաստատությունում տեսականորեն և գործնականում ծանոթանալ տարբեր մասնագիտությունների առանձնահատկություններին:

23.05.2023թ. ծրագրի երկրորդ օրը կազմակերպվեց ուսումնաճանաչողական այց «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ և «Royal Furniture Gyumri» կահույքագործության արտադրամաս, որտեղ աշակերտները հանգամանորեն ուսումնասիրեցին «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» և «Կահույքի արտադրության տեխնոլոգիա՝ կահույքագործ» մասնագիտություններին բնորոշ գործնական աշխատանքային գործընթացները: Դպրոցականները ձեռք բերեցին նաև գործատուների կողմից առաջարկվող ոլորտային կրթական և աշխատանքային պահանջարկի ու հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

24.05.2023թ. Վերջին զանգի ղողանջներ

18.06.2023թ. Գյումրու Երիտասարդական պալատի կողմից կազմակերպված ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառքին մասնակցեցին ուսումնարանի «Ազգային հուշանվերներ» ուսանողական ընկերության անդամները:

26-27. 08.2023թ. մասնակցություն ՀՀ-ում «Կենսունակ ժառանգություն» խորագրի ներքո «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառմանը: Մասնագիտական արհեստանոցները տրամադրվել են շրջայցեր և վարպետաց դասեր անցկացնելու համար:

24.10.2023թ. Այցելություն Գյումրու հյուրընկալության արվեստի և զբոսաշրջության ակադեմիա՝ "Createon academy'': Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանի նախաձեռնությամբ՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները

այցելեցին Արվեստի և զբոսաշրջության ակադեմիա՝ մասնակցելու «Մոտիվացիա» թեմայով դասընթացին: Դասընթացավար Լուսինե Ավագյան:

02.11.2023թ. ուսանողները Աշկերտության ծրագրի շրջանակներում հետաքրքիր հանդիպում ունեցան դերասան ռեժիսոր Արմեն Արշալույսանի հետ, ով դերային խաղերի միջոցով ծանոթացրեց գործատուին ներկայանալու տարրական հմտությունների հետ՝ կեցվածք, խոսք, ժեստեր:

23-31.10.2023թ. անցկացվեց «Ռուսաց լեզվի շաբաթ»՝ նվիրված ռուս գրականությանն ու մշակույթին՝ կարևորելով ընթերցանության դերը, որպես լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության և գաղափարների փոխանակման միջոց:

28.11.2023թ. ուսումնարանում կազմակերպվեց և անցկացվեց «Մեդիագրագիտություն» թեմայով սեմինար-պարապմունք, որը վարեց «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի անդամ՝ Արտաշես Հարությունյանը:

06.12.2023թ. ուսումնարանում ՀՀ ՆԳՆ «ՍՊՏԾ» ՊՈԱԿ-ի հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի ԲՏԱԲ-ի աշխատակիցներ՝ Կարինե Սարգսյանը և Զոյա Հարությունյանը իրականացրեցին «Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները» թեմայով դասընթաց՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածության մակարդակը դասախոսական համակազմի, աշխատակիցների և ուսանողների շրջանում:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

25.02.2023թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի հավաքական թիմը, «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից ստանալով վերապատրաստումների և բանավեճի մրցաշարերին մասնակցելու հրավեր, ներկայացավ «Կոռուպցիա. Shift+Delete» ծրագրի շրջանակներում իրականացվող կարողությունների զարգացման երկօրյա վերապատրաստման դասընթացին:

27-29.03.2023թ. ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից «Կարողություններն միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում» ծրագրով վերապատրաստվել են 10 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ:

25-29.04.2023թ. Սևանի բազմագործառութային պետական քոլեջում, «ՏՈՒԿ-ՖԱԱՌԱԼՊ» տեխնոլոգիական ուսուցման կենտրոնում, համակարգչային մասնագիտական մոդուլների դասախոս Արտաշես Գրիգորյանը մասնակցել է «Մեկշաբաթյա տեխնոլոգիական ուսուցման մոդուլ ստեղծելու ռազմավարությունը» թեմայով վերապատրաստման դասընթացին:

25.04.2023թ. ուսումնարանում իրականացվեց Շիրակի մարզի նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական 18 ուսումնական հաստատությունների ուսանողների համար **խորհրդատվություն:** Օրակարգում՝ ա/ Ծանոթություն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների հետ, բ/Ուսանողական խորհուրդների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:

13-14.06.2023թ. մասնակցել ենք «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «ԱՐԱՄԱԶԴ Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացման ծրագրի» շրջանակներում կազմակերպված «Սոցիալական համերաշխության տնտեսություն» թեմայով դասընթացին: Դասընթացը վարել են S-NODI /Իտալիա/ փորձագիտական ընկերության մասնագետները:

20-22.06.2023թ. ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Զ. Նահապետյանը մասնակցել է «ՆՄՄԿ հաստատություններում ուսումնական գործընթացն ապահովող

փաստաթղթաշրջանառություն» թեմայով նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական պետական հաստատությունների ղեկավարների եռօրյա վերապատրաստման դասընթացին:

03-04.07.2023թ. Վերապատրաստման երկօրյա դասընթաց՝ կազմակերպված Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի և «Կարիերայի լաբ» կարիերայի և շարժունության կենտրոնի հետ համագործակցությամբ:

16-21.10.2023թ. ՌԴ Տամբով քաղաքի բազմապրոֆիլային տեխնիկական քոլեջում ԴՍԵԲ հիմնարկի և ՌԴ ճյուղային սննդի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպված վերապատրաստմանն է մասնակցել «Խոհարար» մասնագիտությամբ դասախոս Անի Պետոյանը ՝ հետագայում «Դպրոցական սնունդ» ծրագրում որպես դասընթացավար ներգրավվելու նպատակով:

5-7.10.2023թ. Կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կիմա Ղարագյոզյանը և «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մոդուլներ դասավանդող Արտաշես Գրիգորյանը մասնակցել են «Մասնավոր հատվածի զարգացում և ՏՄԿՈՒ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստմանը, որը վերաբերվում էր ՄԿՈՒ հաստատություններում VR տեխնոլոգիաների կիրառմանը և կարիերայի ուղղորդմանը:

19,23,24,26,27 հոկտեմբերի Կիմա Ղարագյոզյանը, Անուշ Մկրտչյանը մասնակցել են «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «ԱՐԱՄԱԶԴ. սոցիալական տնտեսության զբաղվածության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Ձեռնարկատիրական հմտությունների և գործարար ծրագրերի մշակում» թեմայով կարողությունների զարգացման դասընթացներին:

06.11.2023թ. առցանց հանդիպում «Հայաստանի հմտություններ» մրցույթի փորձագետ Արբի Ղարախանի հետ՝ մրցույթի ընթացքում ներկայացվող առաջադրանքի վերաբերյալ քննարկում:

15-17.11.2023թ. «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մոդուլներ դասավանդող Արտաշես Գրիգորյանը և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Սողոմոն Հարությունյանը մասնակցել են Սևանի բազմագործառութային պետական քոլեջի տարածքում գտնվող «ՏՈՒԿ - ՖԱԱՌԱՅՊ» տեխնոլոգիական ուսուցման կենտրոնում կազմակերպված «ELEC OO» Էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի բազային գիտելիքներ մոդուլի վերապատրաստման դասընթացին:

30.11-04.12.2023 թ. Անի Պետոյանը և Ահարոն Մելիքյանը մասնակցել են GIZ-ի կողմից Խոհարարություն դասավանդողների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացին:

05.07.2023թ. ETF GLAD «Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում» /առցանց/:

21.11.2023թ. ETF GLAD «Ինչպես է Օսնաբրյուկի հռչակագիրը գործնական առումով աշխատում և ինչպես կարող է այն օգտագործվել ազգային մակարդակով. ինչ արժեք է դա բերում գործընկեր երկրին» /առցանց/:

30.11.2023թ. ETF GLAD « շահագրգիռ կողմերի դերը մասնագիտական որակավորումների մշակման և կառավարման գործում» թեմայով /առցանց/:

04.12.2023թ. ETF GLAD «Սոցիալական գործընկերների դերը կանաչ տնտեսության արդար անցման գործում» /առցանց/:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎՆԵՐ

31.01.2023թ. ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտության դասախոսներ Ա.Պետոյանը, Հ.Մաղաքյանը և չորս ուսանողներ մասնակցել են "Double Tree by Hilton" հյուրանոցում

տեղի ունեցած 6-րդ միջազգային "Food Alco Tasting HoReCa" B2B էքսպո ցուցահանդեսին, որտեղ կայացավ HoReCa սեգմենտի լավագույն արտադրողների և սպառողների նպատակային հանդիպումը: Ցուցահանդեսի շրջանակներում իրականացվեց «Հայաստանի Խոհարարների Ասոցիացիա»-ի անդամների նախնական հավաքագրում:

29.06.2023թ. մասնակցություն մեկօրյա աշխատաժողովի կազմակերպված Action Agsinst Hunger կազմակերպության կողմից՝ GIZ-ի հետ համագործակցությամբ, որտեղ ներկայացվեցին և ամփոփվեցին ուսումնարանում «Shuttle» մեթոդաբանության տեղայնացման և փորձարկման գործընթացը, իրականացված աշխատանքները, քաղած դասերը և արդյունքները:

29.06.2023թ. մասնակցություն «Կարիերայի ազգային օրերի կազմակերպման» որոշման նախագծի քննարկմանը կազմակերպված ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Նոյեմբեր 2023թ. «Բիզնես և Կրթություն Գործընկերություն» Հիմնադրամի հիմնադիր և «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա»-ի նախագահ՝ Մարինե Ժամկոչյանի, գործընկերներ Ուտե Ֆոկի եւ Կերստին Զայզեի հետ միասին մասնակցություն «Թուրինյան գործընթաց. դեպի ցկյանս ուսումնառություն. ազգային լուսավորչական հանդիպում» խորագրով աշխատաժողովին:

06.12.2023 մասնակցություն «Տնտեսական աճը կարողությունների զարգացման միջոցով» թեմայով համաժողովին՝ կազմակերպված ՈԱԱԿ-ի կողմից:

Համաժողովում իրականացվեցին պանելային 2 քննարկում

- «Տնտեսական զարգացում՝ համահնչեցնել ՄԿՈՒ կրթական ծրագրերն արդյունաբերության կարիքներին» - մասնակցեց հաստատության գործընկեր-գործատու Խաչիկ Սահակյանը
- «Կարող աշխատուժի ձևավորումը տալիս է տնտեսական զարգացման շոշափելի արդյունք. ՄԿՈՒ հաջողված փորձի ներկայացում» - մասնակցեց ուսումնարանի «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում՝ Արևային էներգետիկ կայանների մոնտաժման, նորոգման և սպասարկման էլեկտրիկ-փականագործ» մասնագիտության դասախոս՝ Վլադիմիր Բագրատունին

07.12.2023թ. մասնակցություն GIZ-ի կողմից կազմակերպված «ԱՀՈ շրջանակներում գործնական աշխատանքային ուսուցման կազմակերպման համար կնքվող պայմանագրերի ներկայացում-քննարկում» աշխատաժողովին: Ներկայացվեց ուղեցույց՝ Աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈՒ) կազմակերպման շրջանակներում կնքվող տիպային պայմանագրերի և դրանց լրացման կարգի վերաբերյալ, Դուալ կրթության ԱՀՈՒ շրջանակներում գործնական աշխատանքային ուսուցման տիպային պայմանագրերը՝

I. Փոխըմբռնման հուշագիր
II. Համագործակցության պայմանագիր
III. Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր
IV. Աշխատանքային պրակտիկա կազմակերպելու մասին պայմանագիր

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

11.04.2023թ. Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կրթօջախի «Ոսկերչություն», «Գեղանկարչություն և քանդակագործություն», «Համակարգիչների շահագործում » մասնագիտության III կուրսերի հինգ ուսանողներ մասնակցեցին «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից կազմակերպված ստեղծագործական մրցույթին: Ներշնչանքի

աղբյուրը ֆրանսիացի փիլիսոփա Հենրի Բերգսոնի միտքն էր.«Կատակերգությունն ավելի մոտ է իրական կյանքին, քան դրաման»: Ուսանողների կողմից ընտրված «Կատակասեր գյումրեցու և նրբագեղ ֆրանսուհու հանդիպումը» թեմայով ձեռակերտ ստեղծագործական աշխատանքները՝ որպես նյութական արժեքներ, եզակի էին իրենց տեսակով և արժանացան բացառիկ գնահատականի՝ «Գրան Պրի»/GRAND PRIX/ հավաստագրի:

02-04.06.2023թ.Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարար» որակավորմամբ ուսանող/2021-20220 շրջանավարտ/ Ահարոն Մելիքյանը մասնակցեց EventToura ընկերության, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի, WorldSkills Armenia-ի, Երևանի Քաղաքապետարանի և GIZ-ի աջակցությամբ անցկացված «Հայաստանի Երիտասարդ-ուսանող խոհարարի մրցույթ 2023»-ին: Վերջինս զբաղեցրեց պատվավոր երրորդ տեղ:

03.11.2023թ. ոսկերչություն մասնագիտությամբ 4 ուսանողների մասնակցություն «Հայաստանի հմտություններ» մրցույթի նախընտրական փուլին:

17.11.2023թ. մասնակցություն Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում կազմակերպված «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ գավաթի հերթական մրցաշարին՝ զբաղեցնելով երկրորդ պատվավոր տեղ:

12.12.2023թ. մասնակցություն «Հայաստանի Հմտություններ» ազգային մրցույթի մասնակիցների պարգևատրման արարողությանը, որտեղ ուսումնարանի ուսանողները ստացան իրենց մրցանակային պարգևները.

- Եշիլբաշյան Հակոբ – ոսկե մեդալ
- Սարգսյան Հայկ – արծաթե մեդալ
- Հակոբյան Նարեկ – բրոնզե մեդալ

Վկայականներով պարգևատրվեցին և խրախուսվեցին «Ոսկերչություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Արթուր Հարությունյանը և «Խոհարարական գործ» մասնագիտության գծով շրջանավարտ Ահարոն Մելիքյանը:

Պարգևատրվել են «Հայաստանի հմտություններ» մրցույթի ազգային փուլի մասնակիցները (1lurer.am)
https://www.youtube.com/watch?si=pyRkVNsm6i_SqUpk&fbclid=IwAR0GVRogY-rzHyzTufgggMVgZbpoDIWhamH91RqZITA4a9Ffwx8yATQtK5k&v=_QQ0s7h3Xd8&feature=youtu.be
ՀԱՅՏՆԻ ԵՆ 2023Թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ - MKUZAK

22.12.2023թ մասնակցություն ԿԱԶԱ հիմնադրամի «Փոփոխությունների ապագա դերակատարները» ծրագրի շրջանակներում անցկացված «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտելեկտուալ խաղին, որը կազմակերպվել էր «ԽորանԱրդ»ինտելեկտուալ ակումբի կողմից: Թիմը զբաղեցրեց երկրորդ պատվավոր տեղը...

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

04.02.2023թ. ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության III կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը մասնակցեց սամբոյի Շիրակի մարզի պատանիների առաջնությանը:

Պատանի մարզիկը 71 կգ քաշային կարգում, ունեցավ գերազանց մրցելույթներ և զբաղեցրեց 1-ին պատվավոր տեղը:

12.02.2023թ. ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մասնագիտության III կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը մասնակցելով Չարենցավանի Ա.Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում անցկացված Հայաստանի Հանրապետության ձյուդոյի երիտասարդների առաջնությանը 73 կգ քաշային կարգում զբաղեցրեց մրցանակային երկրորդ պատվավոր տեղը:

05.03.2023թ. «Համակարգիչների շահագործում» մասնագիտության I կուրսի ուսանող Արմեն Նազարյանը մասնակցելով Գյումրի «ՋՄՄՄ» լողի ստուգարքային մրցումներին՝ 50 մ ազատ լողատարածությունում 0.43.25 արդյունքով գրավել է երկրորդ տեղ:

06.03.2023թ. ուսումնարանի ուսանող Համլետ Պարսամյանը մասնակցեց Երևանի «Դինամո» մարզահամալիրում անցկացված սամբոյի պատանիների առաջնությանը՝ հանդես գալով 71կգ քաշային կարգում: Հմուտ մարզիկն ունենալով գերազանց մրցելույթներ՝ մրցակիցների նկատմամբ տարավ վստահ հաղթանակ և զբաղեցրեց առաջին պատվավոր տեղը:

12.03.2023թ. «Համակարգիչների շահագործում» մասնագիտության I կուրսի ուսանող Վիգեն Ղալաչյանը մարտի 12-ին մասնակցեց «Գյումրու համայնքի Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կյոկուշինկայ կարատեի կատայի առաջնությանը և գրավեց III պատվավոր տեղ/հանրապետական չէ/:

13-15.04.2023թ. «Ոսկերչություն՝ոսկերիչ» առաջին կուրսի ուսանող Սուրեն Խաչատրյանը և «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» երկրորդ կուրսի ուսանող Կարապետ Մկրտչյանը մասնակցեցին Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում անցկացված ծանրամարտի պատանիների հուշամրցաշարին: Այն նվիրված էր Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած Էդվարդ Մարանջյանի հիշատակին:

- Սուրեն Խաչատրյանը հանդես գալով 96 կգ քաշային կարգում՝ 245 կգ երկամարտի գումարով, գրավեց առաջին պատվավոր տեղ:
- Կարապետ Մկրտչյանը հանդես գալով 61 կգ քաշային կարգում՝ 195 կգ երկամարտի գումարով, գրավեց երկրորդ պատվավոր տեղ:

23.04.2023թ. Իսրայելում անցկացվեց պատանիների սամբոյի Եվրոպայի առաջնությունը, որին իր մարզական բացառիկ կարողություններով հանդես եկավ «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող փայտյա գեղարվեստական իրերի» երրորդ կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը: Նա հռչակվեց պատանիների Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն: Համլետ Պարսամյանը հայ մարզիկին բնորոշ հայկականության ավանդների տարածողներից է աշխարհի սպորտային մեծ բեմերում:

2023 թ. օգոստոս «Ոսկերչություն» մասնագիտությամբ երրորդ կուրսի ուսանող Խորեն Ծատուրյանը մասնակցեց Դուբայում անցկացված պարաձանրամարտի Աշխարհի երիտասարդների առաջնությանը և 49 կգ քաշային կարգում նվաճեց առաջին տեղը:

14.10.2023թ. «Խոհարարական գործ» մասնագիտության առաջին կուրսի ուսանող Ռաֆիկ Պետրոսյանը մասնակցելով Գյումրի քաղաքում անցկացված Թայենքֆանդոյի բաց առաջնության՝ 2006-2008 տարիքային խմբում /սև կարգում/ զբաղեցրեց II պատվավոր տեղը:

5-12.11.2023թ. Վիգեն Ղալաչյանը/ «Համակարգիչների շահագործում» II կուրս/ ու Վլադիմիր Մկրտչյանը/«Համակարգիչների շահագործում» I կուրս/ ՌԴ Օրյոլ քաղաքում մասնակցեցին կարատեի բոլոր ոճերի միջազգային ֆեդերացիայի աշխարհի առաջնությունը: 29 երկրներից՝ թվով 3300 մարզիկների մրցակցության արդյունքում մեր ուսանողները զբաղեցրին պատվավոր երրորդ հորիզոնականը և նվաճեցին բրոնզե մեդալներ:

Մասնագիտական կողմնորոշման դասեր

Ապրիլ-մայիս 2023թ. կազմակերպվել են շրջայցեր Գյումրու տարբեր դպրոցներ, որտեղ իրականացվել են մասնագիտական կողմնորոշման դասեր:

Ապրիլ-մայիս 2023թ. ուսումնարանում կազմակերպվել է «Բաց դռների օրեր», որի շրջանակներում հյուրնկալվել են Գյումրու և հարակից համայնքների հիմնական և ավագ դպրոցների աշակերտներ, ովքեր մասնակցեցլ են տարբեր մասնագիտությունների գործնական աշխատանքներին և ծանոթացել ուսանողների պատրաստած աշխատանքներին:

Փորձի փոխանակում, վարպետաց դաս

13.03.2023թ.Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ոսկերիչ II կուրսի ուսանող Սամվել Պողոսյանը մասնակցեց «Միասին» հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված խոհարարության վարպետաց դասին: Որպես խոհարարական հմտություններով և ստեղծագործական հնարներով օժտված ակտիվ կամավոր՝ մեր ուսանողը վարպետաց դասի ժամանակ պատրաստեց բեզե՝ մանրամասն ներկայացնելով բեզեի պատրաստման տեխնոլոգիան, տեխնիկան: Գործնական մթնոլորտն ապահովված էր, արդյունավետ հանդիպումը՝ կայացած:

02.05.2023թ. «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները մասնակցեցին «Միասին» հիմնադրամի կողմից/Miassine/ կազմակերպված, «Ուհի» ցուցահանդեսի շրջանակներում «Աշկերտների տան»-ը անցկացված, վարպետաց դասին: Նորարարական հրուշակագործության հմուտ վարպետ, նկարչուհի Սաթենիկ Գևորգյանի կողմից անցկացված հմտությունների ցուցադրությունը ծառայեց իր նպատակին: Մեր ուսանողներն իրենց խոհարարական կարողությունները լավագույնս դրսևորելով՝ անմիջական մասնակցություն ունեցան թխվածքաբլիթների թխման գործընթացին: 3D թխվածքաբլիթներ պատրաստող կրեատիվ մասնագետի հետ սովորողները կատարեցին անուշեղենի ձևավորման ինքնատիպ աշխատանքներ:

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ

2022թ. սեպտեմբերից 2023թ. հունվար ամիսներին ուսումնարանի և «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի միջև կնքած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրի համաձայն իրականացվել է «Ոսկերչություն» մասնագիտությամբ կարճաժամկետ ծրագիրը, 44 օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած երիտասարդի համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

19.06.2023թ. Շնորհակալական նամակ «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի կողմից «Կոռուպսիա: Shit+Delete» ծրագրին ուսումնարանի հավաքական թիմի մասնակցության համար

24.07.2023թ. Շնորհակալական նամակ «Նոր լույս» Մենթորիգ Կենտրոն Երիտասարդների համար ՀԿ-ի կոմից՝ համագործակցության և ուսումնարանի ուսանողներ Միշա Կուրղինյանի, Կարապետ Մկրտչյանի և Հրաչ Ավոյանի գերազանց կատարած կամավորական աշխատանքերի համար:

16.11.2023թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում «Մասնագիտական կրթության որակի ապահովման» կենտրոնի փորձագիտական խմբի հետ հանդիպումներ ունեցան ծնողներ՝ Ամալյա Ղոչիկյանը, Նաիրա Սերոբյանը, Լուսինե Շահբազյանը, ովքեր ներկայացրեցին ուսումնարանի գործունեությունը, իրենց երեխաների հաջողությունները:

Շնորհակալական նամակ են հղել նաև «Ոսկերչություն» մասնագիտությամբ շրջանավարտներ Կարլեն Շահբազյանի, Սամվել Ղազարյանի ծնողները. իրենց երեխաների բազմակողմանի կրթության, դաստիարակության, մասնագիտական խորը գիտելիքներ և կարողություններ հաղորդելու համար:

ՓՈՐՁԻ ՏԱՐԱԾՈՒՄ

31.08.2023թ. ուսումնական հաստատությունը հյուրընկալել է «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամին, զուգահեռ անցկացվել «Ուսանողական ընկերություններ»-ի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց ՀՀ ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների, ուսանողների և տնօրենների համար: Կազմակերպվել է աշխատարաններ ուսանողական ընկերություններում:

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Մարտ-ապրիլ ամիսներին ուսմասվար Ա. Մարգարյանը մասնակցել է ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից «Կաշվե իրերի պատրաստում» մասնագիտական **չափորոշչի մշակման**, իսկ դասախոս Ս. Մկրտչյանը՝ «Գեղանկարչություն և քանդակագործություն՝ փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի» մանագիտական **չափորոշչի վերանայման** աշխատանքներին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ստեղծման պահից ուսումնարանը համագործակցում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հետ

2011թ. Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

2011թ. «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ

2012թ. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի /հիմնադրամ/ Գյումրու մասնաճյուղ

2013թ. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

2013թ.«ՀԱՏՄ» ՍՊԸ

2019թ. «Բեռլին հյուրերի տուն» ՍՊԸ

2019թ. «Նոր Հալեպ» ՍՊԸ

2019թ. - ից «Կռոնոս» ՍՊԸ

2019թ. «Ատան» ՍՊԸ

2019թ-. «Մեղր և բույս» ՍՊԸ

2018թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

2018թ. «Մ Ի Ա Ս Ի Ն» բարեգործական հիմնադրամ

2018թ «ԼԵՆՏԵՔՍ» ՍՊԸ

2018թ. «Նազարովի անվան երկրաֆիզիկայի ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

2019թ. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

2019թ. գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)-համագործակցություն Հարավային Կովկասում»

2019թ. «Հայկական Կարիտաս» ԲՀԿ
2019թ. «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամ
2019թ. Գերմանիայի Մեկլենբուրգ–Ֆորպոմերանիա Դաշնային տարածաշրջանային էկոնոմիկայի ուսումնական կենտրոն
2019թ. Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն «ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ
2019թ. «Երիտասարդական պալատ» համայնքնային ոչ առևտրային կազմակերպություն
2019թ. «Նոր լույս» մենթորինգ կենտրոն երիտասարդների համար ՀԿ
2019թ. «ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
2019թ. «Իմպերիալ ալյանս» ՍՊԸ
2019թ. «Պիցցա Տաշիր» ՍՊԸ
2020թ. «Ֆերտի» ԲՀԿ ,
2020թ. «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ
2020թ. «Միացյալ ազգերի զարգացման ծրագրեր» (ՄԱԶԾ)
2020թ. «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ» (ԳԷՀ)
2020թ.«Փոքր դրամաշնորհների ծրագր» (ՓԴԾ)
2020թ.«Մինասյան գարդեն» ՍՊԸ
2021թ.Ֆրանսիական «L'Œuvre d'Orient» կազմակերպություն
2021թ.ՄԱԿ-ի զարգացման ծրագիր և «Կոլբա լաբ»
2022թ. Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)
2022թ. Action Against Hunger (AAH) /Ակցիա ընդդեմ սովի/ միջազգային կազմակերպության
2022թ. «Բուեմարինո» ՍՊԸ
2023թ. «ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ
2023թ.«Դավիթ Գրիգորյան» ԱՁ
2023թ. «Կումա» ՍՊԸ
2023թ.«Լաստրադա» ՍՊԸ
2023թ. «GoUp» ընկերություն

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆԵՐ.

Միջոցառումները լուսաբանվել են ԶԼՄ-ներով, սոցիալական ցանցով և հաստատության /www.gyumriusumnaran4.am/ պաշտոնական կայք էջում:

- Աշխատանքի առաջարկ՝ անմիջապես սովորելու ընթացքում - Mediamax.am,
- Новости Армении – МТРК «МИР»Будущих поваров в Гюмри начали обучать по дуальной системе (mir24.tv) /դուալ ուսուցում/
- [Reportage photo] En Arménie, la foi dans la vie (lepelerin.com) /սոցիալական ձեռնարկություն/
- https://fb.watch/nrV-z5QEYW/

Պահանջվող համապատասխան հաշվետվությունները գործող կարգերի համաձայն ժամանակին ներկայացվել է նախարարություն:

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան